ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

«Հավատարմագրման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-468-13.12.2022-ՏՀ-011/0) և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-468[1]-13.12.2022-ՏՀ-011/0) վերաբերյալ

Կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Հավատարմագրման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-468-13.12.2022-ՏՀ-011/0) և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-468[1]-13.12.2022-ՏՀ-011/0) (այսուհետ միասին՝ Նախագծերի փաթեթ) մասնագիտական փորձաքննության են ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչությունում:

Նախագծերի փաթեթը ենթարկվել է իրավական, ֆինանսատնտեսագիտական, սոցիալական փորձաքննության:

Ստորև ներկայացվում է մասնագիտական փորձաքննության եզրակացությունը, ինչպես նաև Նախագծերի փաթեթին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանքը:

ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **ԼԻԴԻՅԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**

05.01.2023թ.

Իրավական փորձաքննության արդյունքները

Նախագծերի փաթեթի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն) և օրենքների պահանջներին համապատասխանության տեսանկյունից նշենք հետևյալը.

1. «Հավատարմագրման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետով՝ «Հավատարմագրման մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասում «հավատարմագրման ազգային մարմին» բառերից հետո լրացվում է «այսուհետ՝ (ԱՐՄՆԱԲ)» բառերը և կետադրական նշանները:

Նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետի «ե» ենթակետով՝ Օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասում «մարմիններ» բառից հետո լրացվում է «(ՀԳՄ)» բառը և կետադրական նշանները:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսվում է, որ՝ *նորմատիվ իրավական ակտում <u>հաճախակի կիրառվող</u> երկար արտահայտությունները նույն նորմատիվ իրավական ակտում կարող են սահմանվել կրճատ տարբերակով՝ իրավական ակտում առաջին իսկ կիրառումից հետո նախատեսելով կամ տվյալ արտահայտության սահմանումը, կամ <u>փակագծերում նշելով կրճատ տարբերակը</u>:*

Նախագծի 2-րդ հոդվածով՝ Օրենքի ամբողջ տեքստում «համապատասխանության գնահատման մարմին» բառերն իրենց հոլովաձևերով փոխարինվում են «ՀԳՄ» հապավմամբ՝ համապատասխան հոլովաձևերով, իսկ «հավատարմագրման ազգային մարմին» բառերն իրենց հոլովաձևերով փոխարինվում են «ԱՐՄՆԱԲ» բառով՝ համապատասխան հոլովաձևերով: Միաժամանակ՝ հարկ է նկատել, որ Նախագծի 3-րդ հոդվածով՝ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը նոր խմբագրությամբ շարադրելիս «համապատասխանության գնահատման մարմին» հասկացությունից հետո նշվում է «այսուհետ՝ ՀԳՄ», Նախագծի 3-րդ հոդվածով Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը նոր խմբագրությամբ շարադրելիս կիրառվում է «հավատարմագրման ազգային մարմին» գրելաձևը, Նախագծի 3-րդ հոդվածով՝ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը նոր խմբագրությամբ շարադրելիս կիրառվում է «համապատասխանության գնահատման մարմին» գրելաձևը, Նախագծի 3-րդ հոդվածով Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում նոր 25-րդ կետ լրացնելիս կիրառվում է «հավատարմագրման ազգային մարմին» գրելաձևը, Նախագծի 14-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր՝ 13.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին

կետում կիրառվում է «հավատարմագրման ազգային մարմին» գրելաձևը, Նախագծի 20-րդ հոդվածով՝ Օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասը նոր խմբագրությամբ շարադրելիս կիրառվում է «համապատասխանության գնահատման մարմին» գրելաձևը, սակայն, Նախագծի մի շարք այլ հոդվածներով Օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելիս կիրառվում են վերոնշյալ հասկացությունների կրճատ տարբերակները: Օրենքի 8-րդ հոդվածը վերաբերում է հավատարմագրման ազգային մարմնին, որի 2-րդ մասում սահմանվում է այդ մարմնի անվանումը, հաշվի առնելով Նախագծի 2-րդ հոդվածով Օրենքում կատարվող փոփոխությունները՝ կարող ենք նշել, որ Օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասում որպես մարմնի անվանում կսահմանվի «ԱՐՄՆԱԲ» կրճատ տարբերակը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջն՝ առաջարկում ենք Նախագծով Օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելիս պահպանել հասկացությունների և դրանց կրճատ տարբերակների կիրառման կանոնները:

2. Նախագծի ողջ տեքստում, ինչպես նաև Նախագծով՝ Օրենքում կատարվող լրացումների և փոփոխությունների տեքստերում առաջարկում են պահպանել դասական թվականների գրության ձևը:

3. Նախագծի 3-րդ հոդվածով՝ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը շարադրվում է նոր խմբագրությամբ, ինչի արդյունքում նախատեսվում է հետևյալ կարգավորումը.

*«6) բողոքարկում՝ ՀԳՄ-ի կողմից բողոքարկման հանձնաժողովին գրավոր դիմում՝ իր հավատարմագրման **կարգավիճակի վերաբերյալ** ԱՐՄՆԱԲ-ի կայացրած բացասական որոշման վերանայման վերաբերյալ.»:*

Նախագծի 9-րդ հոդվածով՝ Օրենքի 9-րդ հոդվածի 2-8-րդ մասերը ուժը կորցրած են ճանաչվում, մինչդեռ Օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ մասի 7-րդ կետով նախատեսվում է, որ հավատարմագրման խորհուրդը ստեղծում է բողոքարկման հանձնաժողով և սահմանում բողոքարկման հանձնաժողովի գործունեության ու բողոքարկումների քննարկման կարգը:

Միաժամանակ՝ Նախագծի մյուս հոդվածներով կատարվող փոփոխությունների և լրացումների արդյունքում որևէ այլ սուբյեկտի չի վերապահվում վերոգրյալ գործառույթը:

Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ *«Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ*

իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ <u>օրենքը պետք է ձևակերպված լինի բավարար հստակությամբ, ինչը հնարավորություն կտա ֆիզիկական և իրավաբանական անձանց ողջամտորեն կանխատեսել իր վարքագծի իրավական հետևանքները:</u> Օրենքը պետք է օժտված լինի իրավունքի գերակայությունից բխող այնպիսի որակական հատկանիշներով, ինչպիսիք են **հասանելիությունը և կանխատեսելիությունը**: Բացի այդ, օրենքը պետք է ձևակերպվի այնպես, որ մասնավոր անձինք օժտված լինեն հանրային իշխանության կամայական միջամտությունների դեմ արդյունավետ պաշտպանության հնարավորությամբ (տե՛ս Olsson v. Sweden (No. 1), (10465/83) գործով Եվրոպական դատարանի 24.03.1988 թվականի վճիռը, կետ 61):

Սահմանադրական դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ ակնկալիքները:

Իրավական որոշակիության սկզբունքի կապակցությամբ Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում արձանագրել է, որ որևէ **իրավական նորմ չի կարող համարվել «օրենք» եթե ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ կտա անձին դրա հետ համատեղելու իր վարքագիծը** (ՍԴՈ-630), վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Ըստ Սահմանադրական դատարանի՝ իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության (տե՛ս Սահմանադրական դատարանի 02.12.2014 թվականի թիվ ՍԴՈ-1176 որոշումը): Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ

իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ (տե՛ս Սահմանադրական դատարանի 09.06.2015 թվականի թիվ ՍԴՈ-1213 որոշումը):

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածով նախատեսվում է, որ նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրածանոթ հասկացություններ կամ տերմիններ: Եթե նորմատիվ իրավական ակտում օգտագործվում են նոր կամ բազմիմաստ կամ այնպիսի հասկացություններ կամ տերմիններ, որոնք առանց պարզաբանման միանշանակ չեն ընկալվում, ապա տվյալ ակտով տրվում են այդ ակտի էությունից բխող դրանց սահմանումները: Սահմանումները պետք է լինեն այնպիսին, որ ապահովեն դրանց միատեսակ ու միանշանակ ընկալումն ու կիրառումը:

Հիմք ընդունելով նշվածն՝ հարկ ենք համարում նշել, որ Նախագծով՝ Օրենքում կատարվող լրացումների և փոփոխությունների արդյունքում նախատեսվող կարգավորումներից հնրավոր չէ հստակեցնել բողոքարկման հանձնաժողովի կարգավիճակը, հանձնաժողովի գործունեության ու բողոքարկումների քննարկման կարգը: Միաժամանակ՝ հարկ է նկատել, որ Նախագծի 3-րդ հոդվածով՝ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը նոր խմբագրությամբ շարադրելու արդյունքում դրանով չի հստակեցվում այն որոշումների շրջանակը, որոնք ենթակա են բողոքարկման, քանի որ Նախագծով՝ Օրենքում կատարվող լրացումների և փոփոխությունների արդյունքում չի հստակեցվում և սահմանվում *«հավատարմագրման <u>կարգավիճակի</u> վերաբերյալ կայացված բացասական որոշում»* հասկացությունը: Հաշվի առնելով նշածը՝ կարծում ենք՝ Նախագծի 3-րդ հոդվածով՝ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի նոր խմբագրությամբ շարադրվող 6-րդ կետը խնդրահարույց է իրավական որոշակիության սկզբունքի տեսանկյունից:

4. Նախագծով՝ Օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելիս, լրացվող կամ փոփոխության ենթարկվող ձևակերպումներում կետադրական նշանների առկայության դեպքում, առաջարկում ենք նշում կատարել նաև դրանց վերաբերյալ՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ *նորմատիվ իրավական ակտում փոփոխությունները կատարվում են նրա առանձին բառեր, թվեր կամ <u>կետադրական նշաններ</u> այլ բառերով, թվերով կամ <u>կետադրական նշաններով</u> փոխարինելու միջոցով,* և 3-րդ մասը՝ *նորմատիվ իրավական ակտում լրացումներ կատարվում են դրանում նոր բաժիններ, գլուխներ, հոդվածներ, մասեր, կետեր, ենթակետեր,*

պարբերություններ, նախադասություններ, բառեր, թվեր կամ կետադրական նշաններ լրացնելու միջոցով:

5. Նախագծի 3-րդ հոդվածի 10-րդ կետով՝ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետում «գնահատման» բառից հետո լրացվում է «ենթակա» բառը, ինչի արդյունքում նախատեսվում է հետևյալ կարգավորումը՝ *«16) փորձարկում՝ ընթացակարգի համաձայն համապատասխանության գնահատման **ենթակա** օբյեկտի մեկ կամ մի քանի բնութագրերի որոշում.»:* Նախագծի 3-րդ հոդվածի 11-րդ կետով՝ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետը շարադրվում է նոր խմբագրությամբ, ինչի արդյունքում Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետում կիրառվում է «համապատասխանության գնահատման օբյեկտ» եզրույթը: Նախագծի 3-րդ հոդվածի 12-րդ կետով՝ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետը շարադրվում է նոր խմբագրությամբ, ինչի արդյունքում Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետում ևս կիրառվում է «համապատասխանության գնահատման օբյեկտ» եզրույթը:

Հիմք ընդունելով վերոգրյալն և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը՝ *նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ*՝առաջարկում ենք վերանայել քննարկվող կարգավորումները:

6. Հարկ ենք համարում նկատել, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ նորմատիվ իրավական ակտում կարող է կիրառվել կա՛մ «և», կա՛մ «կամ» շաղկապը, միչդեռ «և (կամ)» գրելաձևը կիրառելի չէ: Նշվածով պայմանավորված՝ առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածով՝ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող նոր՝ 21.1-ին կետում վերանայել քննարկվող շաղկապների կիրառությունը:

7. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածով նախատեսվում է, որ *«1. Նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրածանոթ հասկացություններ կամ տերմիններ:*

2. Նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:

3. Եթե նորմատիվ իրավական ակտում օգտագործվում են նոր կամ բազմիմաստ կամ այնպիսի հասկացություններ կամ տերմիններ, որոնք առանց պարզաբանման միանշանակ

չեն ընկալվում, կամ այլ նորմատիվ ակտով տրված է այդ հասկացությունների կամ տերմինների այլ սահմանում, ապա տվյալ ակտով տրվում են <u>այդ ակտի էությունից բխող դրանց սահմանումները</u>: Սահմանումները պետք է լինեն այնպիսին, որ ապահովեն դրանց միատեսակ ու միանշանակ ընկալումն ու կիրառումը: (…):»:

Ինչպես արդեն նշվել է՝ ըստ Սահմանադրական դատարանի՝ իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության (տե՛ս Սահմանադրական դատարանի 02.12.2014 թվականի թիվ ՍԴՈ-1176 որոշումը):

Հիմք ընդունելով վերոգրյալն՝ առաջարկում ենք հստակեցնել Նախագծի 3-րդ հոդվածի 16-րդ կետով՝ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի նոր խմբագրությամբ շարադրվող 22-րդ կետում կիրառվող «համապատասխանության վերաբերյալ <u>հայտարարության վավերականության/գործողության</u> ժամկետ» ձևակերպումը: Նույն դիտարկումը վերաբերելի է նաև Նախագծի 12-րդ հոդվածի 4-րդ կետով՝ Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող նոր՝ 5.3-րդ կետում կիրառվող «համադրում (վերիֆիկացում)» հասկացությանը և Նախագծի 15-րդ հոդվածով՝ Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի նոր խմբագրությամբ շարադրվող 2-րդ կետում կիրառվող «հավատարմագրման ոլորտը արդիականացնելու» հասկացությանը:

Միաժամանակ՝ հարկ է նկատել, որ Նախագծի 19-րդ հոդվածով՝ Օրենքում լրացվող նոր՝ 17.1-ին հոդվածով որպես հավատարմագրման կասեցման հիմք նախատեսվում է գործունեությանը հետևելու ժամանակ հայտնաբերված անհամապատասխանությունները, ինչպես նաև հավատարմագրման դադարեցման հիմք նախատեսվում է գործունեությանը հետևելու գործընթացից հրաժարվելը: Հարկ է նկատել, որ Օրենքի՝ դրանում կիրառվող հասկացություններին վերաբերող 2-րդ հոդվածի 1-ին մասում սահմանվում են «գնահատում», «արտահերթ գնահատում», «պարբերական գնահատում» հասկացությունները, սակայն, «գործունեությանը հետևելու գործընթաց» հասկացությունը Օրենքում սահմանված չէ, և վերոնշյալ կարգավորումներից բացի այլ կարգավորումներում չի կիրառվում: Հիմք ընդունելով վերոգրյալն՝ առաջարկում ենք հստակեցնել «գործունեությանը հետևելու գործընթաց» հասկացության կիրառումը՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ նշված հասկացությունը կիրառվում է իրավաբանական անձանց իրավունքների սահմանափակմանը վերաբերող կարգավորումներում:

8. Հաշվի առնելով Նախագծի 3-րդ հոդվածով՝ Օրենքի 2-րդ հոդվածում կատարվող փոփոխությունների և լրացումների քանակը և ծավալը՝ առաջարկում ենք Օրենքի 2-րդ հոդվածը Նախագծով շարադրել նոր խմբագրությամբ:

9. Նախագծի 6-րդ հոդվածով՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1.1-ին կետը ուժը կորցրած է ճանաչվում, ինչի արդյունքում հավատարմագրման ազգային համակարգի շրջանակից դուրս է մնում հավատարմագրման խորհուրդը՝ որպես առանձին մասնակից: Նախագծի 6-րդ հոդվածով՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում կատարվող փոփոխության արդյունքում հավատարմագրման խորհուրդը ներառվում է հավատարմագրման ազգային մարմնի կազմում:

Օրենքի 9-րդ հոդվածը վերաբերում է հավատարմագրման խորհրդին՝ մասնավորապես կարգավորմամբ նախատեսվում է հետևյալը՝

«1. Հավատարմագրման խորհուրդը (<u>այսուհետ՝ Խորհուրդ</u>) կազմվում է 9 անդամից և ***ձևավորվում երեք շահագրգիռ կողմերից*** *՝*

<u>1) 4 պետական կառավարման մարմինների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների ներկայացուցիչներից.</u>

<u>2) 2 հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների ներկայացուցիչներից.</u>

<u>3) 3 հասարակական և գիտական կազմակերպությունների ներկայացուցիչներից:</u>

2. Խորհրդի անհատական կազմը և աշխատակարգը հաստատում է լիազորված պետական կառավարման մարմինը:

3. Հավատարմագրման ազգային մարմնի գործադիր մարմինը Խորհրդի քարտուղարն է և չի կարող հանդես գալ որպես նախագահ:

4. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե ներկա է քվեարկության ձայնի իրավունք ունեցող Խորհրդի անդամների առնվազն 2/3-ը:

5. Խորհրդի նախագահն ընտրվում է Խորհրդի անդամների կողմից:

6. Խորհրդի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ ուշ, քան տարին երկու անգամ:

7. Խորհրդի նիստերի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Նիստին ներկա անդամների ձայների հավասարության դեպքում Խորհրդի նախագահի ձայնը վճռորոշ է:

8. Խորհուրդը՝

1) մշակում է առաջարկություններ միջազգային լավագույն փորձին ներդաշնակ Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրման բնագավառում պետական քաղաքականության իրականացման հեռանկարային ռազմավարության վերաբերյալ.

2) քննարկում և առաջարկություններ է ներկայացնում Հավատարմագրման ազգային մարմնի տարեկան ծրագրի վերաբերյալ.

3) հաստատում է հավատարմագրման վկայագրի և համապատասխանության գնահատման չկանոնակարգվող ոլորտներում համապատասխանության սերտիֆիկատների ձևերը.

4) հաստատում է հավատարմագրման տեխնիկական կոմիտեների գործունեության կարգը և կազմը.

5) մասնակցում է Հավատարմագրման ազգային մարմնի աշխատակարգի մշակմանը.

6) Հավատարմագրման ազգային մարմնին խորհրդատվություն է տրամադրում հավատարմագրման ոլորտում քաղաքականության իրականացման հարցերով.

7) ստեղծում է բողոքարկման հանձնաժողով և սահմանում բողոքարկման հանձնաժողովի գործունեության ու բողոքարկումների քննարկման կարգը.

8) սահմանում է հավատարմագրման նշանի պատկերը, դրան ներկայացվող տեխնիկական պահանջները և կիրառման կարգը.

9) իրականացնում է լիազորված պետական կառավարման մարմնի հաստատած գործունեության կարգով Խորհրդին վերապահված այլ գործառույթներ:»:

Նախագծի 9-րդ հոդվածով Օրենքի 9-րդ հոդվածի 2-8-րդ մասերը ուժը կորցրած են ճանաչվում: Կատարվող փոփոխության արդյունքում Օրենքով՝ երեք շահագրգիռ կողմերից ձևավորվող ներկայացուցչական մարմինը, որը հավատարմագրման ազգային համակարգում հանդիսանում է առանձին մասնակից, ներառվում է հավատարմագրման ազգային մարմնի կազմում: Միաժամանակ՝ կատարվող փոփոխությունների արդյունքում չեն նախատեսվում հավատարմագրման խորհրդի գործառույթների, գործունեության կարգի, իրավազորության և մի շարք այլ իրավահարաբերությունների վերաբերյալ կարգավորումները:

Հիմք ընդունելով իրավական որոշակիության սկզբունքը՝ առաջարկում ենք հստակեցնել՝ Նախագծով կատարվող փոփոխությունների արդյունքում նախատեսվող՝ հավատարմագրման խորհրդին վերաբերող կարագավորումները:

Միաժամանակ՝ հարկ է նկատել, որ Նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ կետով՝ Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող նոր՝ 5.4-րդ կետում կիրառվում է «Խորհուրդ» եզրույթը, սակայն, հասկացության կրճատ տարբերակը սամանվում է Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասում:

10. Նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ կետով՝ Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող նոր՝ 5.5-րդ կետով նախատեսվում է, որ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմինը հաստատում է ԱՐՄՆԱԲ-ի կողմից ՀԳՄ-ների հավտարմագրման կարգը:

Սահմանադրության՝օրինականության սկզբունքին վերաբերող 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց <u>իրականացումն ապահովելու նպատակով</u> Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու <u>ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր</u>, լիազորող նորմերը պետք է համապատասխանեն **իրավական որոշակիության սկզբունքին**: Օրենքը պետք է օժտված լինի իրավունքի գերակայությունից բխող այնպիսի որակական հատկանիշներով, ինչպիսիք են <u>հասանելիությունը և կանխատեսելիությունը</u> (տե՛ս Olsson v. Sweden (No. 1), (10465/83) գործով Եվրոպական դատարանի 24.03.1988 թվականի վճիռը, կետ 61):

Հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական <u>կառուցակարգեր և ընթացակարգեր</u>: Հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքները և ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ:

Այսպիսով՝ Նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ կետով՝ Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասում կատարվող լրացման արդյունքում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմինը լիազորվում է ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ, այն է՝ ԱՐՄՆԱԲ-ի կողմից ՀԳՄ-ների հավտարմագրման կարգը, սակայն, իրավահարաբերությունների որոշակի շրջանակը, ինչի վերաբերյալ պետք է նախատեսվեն կարգավորումներ համապատասխան

ենթաօրենսդրական իրավական ակտով, լիազորող նորմով հստակեցված չէ: Հիմք ընդունելով նվածն՝ առաջարկում ենք վերանայել Նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ կետով՝ Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող նոր՝ 5.5-րդ կետի կարգավորումը՝ այն Սահմանադրության 6-րդ հոդվածի պահանջին համապատասխանեցնելու նպատակով:

Սույն դիտարկումը հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ օրինակ՝ Նախագծի 8-րդ հովածի 2-րդ կետով՝ Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասը լրացվում է նոր՝ 11.5-րդ կետով, ինչի արդյունքում նախատեսվում է հետևյալ կարգավորումը.

«Հավատարմագրման ազգային մարմինը՝

11.5) կազմակերպում է համապատասխանության գնահատման ոլորտի մասնագետների համար հավատարմագրման վերաբերյալ գիտաժողովներ, վերապատրաստման և որակավորման դասընթացներ, որակավորում է հավատարմագրման փորձագետներին (գնահատողներին) և շնորհում համապատասխան վկայագրեր (սույն կետով սահմանված գործունեությունը ապահովելու նպատակով ԱՐՄՆԱԲ-ի կողմից ստեղծվում են հանձնաժողովներ).»:

Հարկ է նկատել, որ համապատասխանության գնահատման ոլորտի մասնագետների համար հավատարմագրման վերաբերյալ գիտաժողովների, վերապատրաստման և որակավորման դասընթացների կազմակերպման, հավատարմագրման փորձագետներին (գնահատողներին) որակավորելու և համապատասխան վկայագրեր շնորհելու իրավահարաբերությունների իրականացման ընթացակարգի վերաբերյալ կարգավորումները Նախագծով՝ Օրենքում չեն նախատեսվում, մինչդեռ օրինակ՝ Նախագծի 3-րդ հոդվածով՝ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող նոր՝ 22.1-ին կետում «արտահերթ գնահատում» հասկացությունը որպես գործընթաց սահմանելիս հղում է կատարվում հավատարմագրման կարգին: Միաժամանակ՝ հարկ է նկատել, որ ԱՐՄՆԱԲ-ի կողմից ստեղծվող հանձնաժողովների <u>*գործունեության կարգին*</u> վերաբերող կարգավորումներ՝ Նախագծով՝ Օրենքում կատարվող փոփոխությունների և լրացումների արդյունքում չեն նախատեսվում:

Եզրակացության սույն կետում նաև հարկ ենք համարում նշել, որ Նախագծի 19-րդ հոդվածով՝ Օրենքում լրացվող նոր՝ 17.1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսվում է հետևյալ կարգավորումը՝ *«1. Հավատարմագրման լրիվ կամ մասնակի կասեցման հիմք է հանդիսանում՝*

(…)

*3) համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնելիս ՀԳՄ-ների հավատարմագրման կարգով սահմանված հավատարմագրման չափանիշների, **այդ թվում**՝ հավատարմագրման ոլորտին առնչվող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Եվրասիական տնտեսական միության փաստաթղթերով սահմանված պահանջների Հայաստանի Հանրապետության կողմից կնքված միջազգային պայմանագրերի պարտավորությունների խախտումը,»:*

Կարծում ենք՝ հստակեցման և որոշակիացման կարիք ունի հավատարմագրման կարգով սահմանված հավատարմագրման չափանիշների շրջանակի մեջ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները, Հայաստանի Հանրապետության կողմից կնքված միջազգային պայմանագրերի պարտավորությունները ներառելը: Հիմք ընդունելով նշվածն՝ առաջարկում ենք վերանայել Նախագծի 19-րդ հոդվածով՝ Օրենքում լրացվող նոր՝ 17.1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի կարգավորումը՝ այն իրավական որոշակիության սկզբունքին համապատասխանեցնելու նպատակով:

11. Նախագծի 8-դ հովածի 2-րդ կետով՝ Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասը լրացվում է նոր 11.1-11.10-րդ կետերով:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ *նորմատիվ իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ կատարելիս փոփոխվող կամ լրացվող իրավական ակտի բաժինների, գլուխների, հոդվածների, մասերի, կետերի, ենթակետերի, պարբերությունների համարների փոփոխություն չի կատարվում: Նորմատիվ իրավական ակտի բաժինների, գլուխների, հոդվածների, մասերի, կետերի, ենթակետերի կամ պարբերությունների **միջև** համապատասխանաբար նոր բաժին, գլուխ, հոդված, մաս, կետ, ենթակետ կամ պարբերություն կարող է լրացվել միայն լրացուցիչ համարով:*

Հիմք ընդունելով նշվածը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասը կազմված է 11 կետերից՝ առաջարկում ենք Նախագծի 8-դ հովածի 2-րդ կետով՝ Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասում 11-րդ կետից հետո նոր կետեր լրացնելիս շարունակել կետերի համարակալումը հերթական համարով, այլ ոչ լրացուցիչ:

12. Նախագծի մի շարք հոդվածներ բաղկացած են մեկ համարակալված մասից:

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը՝ *օրենսդրական ակտերում հոդվածները **բաժանվում են** «մասեր» կոչվող միայն*

համարակալված պարբերությունների՝ առաջարկում ենք հանել այդ պարբերությունների համարակալումը:

13. Նախագծի 11-րդ հոդվածի 2-րդ կետով՝ Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասից հանվում է «տեխնիկական» բառը, մինչդեռ Օրենքի 11-րդ հոդվածը վերնագրված է «Հավատարմագրման տեխնիկական կոմիտեները» և Նախագծով դրանում որևէ փոփոխություն չի կատարվում:

Հիմք ընդունելով նշվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը՝ *հոդվածների վերնագրերը համապատասխանում են հոդվածների բովանդակությանը*, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախագծով՝ Օրենքում կատարվող լրացումների և փոփոխությունների արդյունքում նախատեսվում են նաև խորհրդատվական տեխնիկական կոմիտեներ՝ առաջարկում ենք վերանայել նաև Օրենքի 11-րդ հոդվածի վերնագիրը:

14. Նախագծի 11-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում կատարվող փոփոխության արդյունքում նախատեսվում է հետևյալ կարգավորումը.

«2. Հավատարմագրման կոմիտեների հիմնական գործառույթներն են՝

(…)

3) ընդունում է հավատարմագրումը ընդլայնելու, կրճատելու, պահպանելու, կասեցնելու, վերականգնելու, դադարեցնելու, վերահավատարմագրելու վերաբերյալ որոշումներ, <u>ինչպես նաև հավատարմագրման պայմանագրի լուծման դեպքում ընդունում է հավատարմագրումը դադարեցնելու վերաբերյալ որոշում</u>:»:

Նախագծի 11-րդ հոդվածի 4-րդ կետով՝ Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասում լրացվող նոր 4-րդ կետով նախատեսվում է հտևյալ կարգավորումը.

«2. Հավատարմագրման կոմիտեների հիմնական գործառույթներն են՝

(…)

4) ՀԳՄ-ի կողմից հավատարմագրման կրճատման, կասեցման կամ դադարեցման դիմումի ներկայացման դեպքում հավատարմագրման կարգով սահմանված ժամկետում ընդունում է համապատասխան որոշում:»:

Հարկ է նկատել, որ Նախագծի 11-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում կատարվող փոփոխության արդյունքում արդեն իսկ նախատեսվում է, որ հավատարմագրման կոմիտեները իրավասու են ընդունելու հավատարմագրումը ընդլայնելու, կրճատելու, պահպանելու, կասեցնելու, վերականգնելու, դադարեցնելու,

վերահավատարմագրելու վերաբերյալ որոշումներ: Սակայն, նշված իրավասությունից զատ, Նախագծով՝ Օրենքում կատարվող փոփոխությունների և լրացումների արդյունքում նախատեսվում են նաև <u>որոշակի հիմքերի նկարագրությամբ</u> համապատասխան որոշումներ ընդունելու իրավասություններ՝ մասնավորապես՝ հավատարմագրման պայմանագրի լուծման դեպքում հավատարմագրումը դադարեցնելու վերաբերյալ որոշում ընդունելու, ՀԳՄ-ի կողմից հավատարմագրման կրճատման, կասեցման կամ դադարեցման դիմումի ներկայացման դեպքում հավատարմագրման կարգով սահմանված ժամկետում համապատասխան որոշումներ ընդունելու:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ *«8. Նորմատիվ իրավական ակտերում բացառվում են իրավական <u>նորմերի անհիմն կրկնությունները և ներքին հակասությունները:</u>»:* Հարկ է նկատել, որ իրավասության ընդհանուր նկարագրությունից բացի, նաև որոշակի հիմքի առկայության պայմաններում նույն իրավասության նախատեսումը կարող է խնդրահարույց լինել հավատարմագրման կոմիտեների համար՝ այլ հիմքերի առկայության դեպքում ընդհանուր իրավասության սահմանված լինելու տեսանկյունից:

Հիմք ընդունելով վերոգրյալն՝ առաջարկում ենք վերանայել Նախագծով կատարվող փոփոխությունների և լրացումների արդյունքում Օրենքում նախատեսվող՝ մեջբերված կարգավորումները:

15. Նախագծի 13-րդ հոդվածով՝ Օրենքի 13-րդ հոդվածը նոր խմբագրությամբ շարադրելու արդյունքում հոդվածի վերնագրի վերջում դրված միջակետն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը՝ *հոդվածների վերնագրերի վերջում որևէ կետադրական նշան չի դրվում:*

Նույն դիտարկումը վերաբերելի է նաև Նախագծի 14-րդ հոդվածով՝ Օրենքում լրացվող նոր՝ 13.1-ին հոդվածի վերնագրի վերջում դրված միջակետին:

16. Նախագծի 14-րդ հոդվածով՝ Օրենքում լրացվում է նոր՝ 13.1-ին հոդված.

«Հոդված 13.1 Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորությունները հավատարմագրման ոլորտում.

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

1) ստեղծում է պետական ոչ առևտրային կազմակերպություն հանդիսացող Հավատարմագրման ազգային մարմինը, որը սույն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ունի ՀԳՄ-ների հավատարմագրում իրականացնելու լիազորություն.

2) սահմանում է հավատարմագրման ոլորտում լիազորված պետական կառավարման մարմինը.

3) սահմանում է ազգային և Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգման ոլորտի շրջանակներում հավատարմագրված ՀԳՄ-ների և դրանց կողմից տրամադրված, գրանցված համապատասխանության գնահատման փաստաթղթերի ռեեստրների վարման կարգերը և չափանիշները:»:

Նախագծի 14-րդ հոդվածով՝ Օրենքում լրացվող նոր՝ 13.1-ին հոդվածի համարն առաջարկում ենք տեքստից բաժանել միջակետով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասը՝ *հոդվածների և մասերի համարները տեքստից բաժանվում են միջակետերով, իսկ հոդվածների կետերի համարները՝ փակագծերով:* Նույն դիտարկումը վերաբերելի է նաև Նախագծի 19-րդ հոդվածով՝ Օրենքում լրացվող նոր՝ 17.1-ին հոդվածի համարին:

Նախագծի 14-րդ հոդվածով՝ Օրենքում լրացվող նոր՝ 13.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանվում է, որ Կառավարությունը ստեղծում է պետական ոչ առևտրային կազմակերպություն հանդիսացող Հավատարմագրման ազգային մարմինը, որը սույն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ունի ՀԳՄ-ների հավատարմագրում իրականացնելու լիազորություն: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ *«8. Նորմատիվ իրավական ակտերում բացառվում են իրավական <u>նորմերի անհիմն կրկնությունները</u> և ներքին հակասությունները:»:* Հիմք ընդունելով նշվածը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Օրենքի 8-րդ հոդվածով արդեն իսկ նախատեսված են քննարկվող կարգավորումները՝ առաջարկում ենք վերանայել Նախագծի 14-րդ հոդվածով՝ Օրենքում լրացվող նոր՝ 13.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին կետի նախատեսման անհրաժեշտությունը:

Նախագծի 14-րդ հոդվածով՝ Օրենքում լրացվող նոր՝ 13.1-ին հոդվածը վերաբերում է հավատարմագրման ոլորտում Կառավարության լիազորություններին, մինչդեռ նոր լրացվող հոդվածը նախատեսվում է Օրենքի՝ <u>հավատարմագրման գործընթացին</u> վերաբերող 4-րդ գլխում: Հարկ է նկատել, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *օրենսդրական ակտերում բովանդակությամբ համասեռ հոդվածները միավորվում են գլուխներում*: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ *նորմատիվ իրավական ակտի*

բաժիններն ու գլուխները ունենում են վերնագրեր, որոնք պետք է համապատասխանեն դրանց բովանդակությանը:

17. Նախագծի 18-րդ հոդվածի 1-ին կետով նոր խմբագրությամբ է շարադրվում Օրենքի 17-րդ հոդվածի վերնագիրը: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ «Հոդված» բառը և հոդվածի համարը չեն հանդիսանում հոդվածի վերնագրի մաս՝ առաջարկում ենք դրանք հանել Նախագծի 18-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված կարգավորումից:

18. Նախագծի 19-րդ հովածով՝ Օրենքում լրացվող նոր 17.1-ին հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է հետևյալ կարգավորումը.

*«2. <u>Հավատարմագրման կասեցման ժամանակահատվածում</u> **<u>կամ</u>** <u>հավատարմագրման պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու դեպքում</u> ՀԳՄ-ը չի կարող ներկայացնել հավատարմագրման ընդլայնման, ինչպես նաև վերահավատարմագրման հայտ:»:*

Նախագծի 19-րդ հովածով՝ Օրենքում լրացվող նոր՝ 17.1-ին հոդվածի 2-րդ մասում «կամ» շաղկապով առանձնացված նշում է կատարվում հավատարմագրման կասեցման ժամանակահատվածի և հավատարմագրման պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու դեպքերի վերաբերյալ, մինչդեռ ըստ նույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հավատարմագրման պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելը հավատարմագրման կասեցման հիմք է հանդիսանում: Հիմք ընդունելով վերոգրյալն՝ առաջարկում ենք վերանայել Նախագծի 19-րդ հովածով՝ Օրենքում լրացվող նոր՝ 17.1-ին հոդվածի 2-րդ մասի կարգավորումը:

19. Նախագծի 19-րդ հովածով՝ Օրենքում լրացվող նոր՝ 17.1-ին հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով նախատսվում են հետևյալ կարգավորումները.

«6. Պարբերական, արտահերթ գնահատումների ժամանակ արձանագրված անհամապատասխանությունների արդյունքում ԱՐՄՆԱԲ-ի կողմից հավատարմագրման դադարեցման <u>կամ կրճատման</u> վերաբերյալ համապատասխան որոշման ընդունման դեպքում ՀԳՄ-ն կարող է հավատարմագրման կամ հավատարմագրման ընդլայնման հայտը ներկայացնել ԱՐՄՆԱԲ-ի կողմից համապատասխան որոշումը ընդունելուց առնվազն վեց ամիս հետո անհամապատասխանությունները վերացնելու դեպքում:

*7. Պարբերական, արտահերթ գնահատումների ժամանակ **արձանագրված անհամապատասխանությունների հայտնաբերումից հետո** ՀԳՄ-ի կողմից ԱՐՄՆԱԲ-ին*

*ներկայացված **դիմումի հիման վրա** հավատարմագրման դադարեցման <u>կամ կրճատման</u> վերաբերյալ որոշման ընդունման դեպքում ՀԳՄ-ն կարող է հավատարմագրման կամ հավատարմագրման ընդլայնման հայտը ներկայացնել համապատասխան որոշումը ընդունելուց առնվազն վեց ամիս հետո անհամապատասխանությունները վերացնելու դեպքում:»:*

Նախագծի 19-րդ հովածով՝ Օրենքում լրացվող նոր՝ 17.1-ին հոդվածը վերնագրված է «Հավատարմագրման լրիվ կամ մասնակի կասեցումը և **դադարեցումը**»: Նույն հոդվածի 5-րդ մասը վերաբերում է հավատարմագրումը **դադարեցնելու** հիմքերին:

Նախագծի 3-րդ հոդվածով՝ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետը նոր խմբագրությամբ շարադրելու արդյունքում նախատեսվում է հետևյալ կարգավորումը՝ *«15) հավատարմագրման դադարեցում՝ հավատարմագրման ամբողջ ոլորտի դադարեցում.:»:* Նախագծի 3-րդ հոդվածով՝ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետում կատարվող փոփոխության արդյունքում Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով նախատեսվում է հետևյալ կարգավորումը՝ *«13) հավատարմագրման կրճատում՝ հավատարմագրման ոլորտի որոշակի մասի դադարեցում.»:* Հիմք ընդունելով նշված կարգավորումները՝ կարող ենք եզրակացնել, որ Նախագծով՝ Օրենքում կատարվող լրացումների և փոփոխությունների արդյունքում նախատեսվող կարգավորումներում «դադարեցում» եզրույթի կիրառումը նշանակում է հավատարմագրման ամբողջ ոլորտի դադարեցում, ուստի հավատարմագրման դադարեցմանը վերբերող հոդվածում չեն կարող նախատեսվել հավատարմագրման կրճատմանը վերաբերող կարգավորումներ:

Հիմք ընդունելով վերոգրյալն՝ առաջարկում ենք Նախագծի 19-րդ հոդվածով Օրենքում 17.1-ին հոդված լրացնելիս պահպանել Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հասկացությունների կիրառման կանոնները:

Նախագծի 19-րդ հովածով՝ Օրենքում լրացվող նոր՝ 17.1-ին հոդվածի 7-րդ մասում նշում է կատարվում այն դեպքի վերաբերյալ, երբ պարբերական, արտահերթ գնահատումների ժամանակ արձանագրված անհամապատասխանությունների հայտնաբերումից հետո հավատարմագրումը դադարեցվում կամ կրճատվում է ՀԳՄ-ի կողմից ԱՐՄՆԱԲ-ին ներկայացված դիմումի հիման վրա: Կարծում ենք, անհրաժեշտ է Նախագծով՝ Օրենքում կատարվող լրացումների և փոփոխությունների արդյունքում նախատեսվող կարգավորումներում հստակեցնել, թե որոնք են այն դեպքերը, երբ պարբերական, արտահերթ գնահատումների ժամանակ արձանագրված

անհամապատասխանությունները ինքնին չեն հանգեցնում հավատարմագրման դադարեցման և դրա դադարեցումը կատարվում է ՀԳՄ-ի կողմից ԱՐՄՆԱԲ-ին ներկայացված դիմումի հիման վրա:

20. Նախագծի 21-րդ հոդվածի 1-ին կետով՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասը շարադրվում է նոր խմբագրությամբ.

«1. ԱՐՄՆԱԲ-ը անդամակցում և համագործակցում է <u>հավատարմագրման տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների</u> հետ, մասնակցում է նրանց գործունեությանը և համաձայնագրերի շնորհիվ ձեռք է բերում տրված հավատարմագրումների ճանաչում:»:

Հարկ է նկատել, որ Օրենքի 19-րդ հոդվածը վերնագրված է «Հավատարմագրման ազգային մարմնի և օտարերկրյա հավատարմագրման մարմինների միջև համագործակցությունը», իսկ Օրենքի 18-րդ հոդվածը վերաբերում է հավատարմագրման ազգային մարմնի՝ հավատարմագրման տարածաշրջանային և միջազգային կազմակերպություններին անդամակցությանը: Հիմք ընդունելով նշվածը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը՝ *հոդվածների վերնագրերը համապատասխանում են հոդվածների բովանդակությանը*՝ առաջարկում ենք Օրենքի 19-րդ հոդվածով նախատեսել օտարերկրյա հավատարմագրման մարմինների հետ համագործակցության վերաբերյալ կարգավորումներ:

21. Նախագծի 24-րդ հոդվածի 2-րդ կետով՝ Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 5-րդ կետի տեքստից հետո նշված «բառերով» բառն առաջարկում ենք հանել:

22. Նախագծի 24-րդ հոդվածի 3-րդ կետով՝ Օրենքի 22-րդ հոդվածում լրացվող նոր՝ 1.1-ին մասի՝ համարն առաջարկում ենք տեքստից բաժանել միջակետով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասը՝ *հոդվածների և <u>մասերի համարները տեքստից բաժանվում են միջակետերով</u>, իսկ հոդվածների կետերի համարները՝ փակագծերով:*

23. Նախագծի 25-րդ և 26-րդ հոդվածների վերնագրերն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը՝ *օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, <u>բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի</u>:*

24. Նախագծի՝ անցումային դրույթներին վերաբերող 26-րդ հոդվածով նախատեսվում է հետևյալը.

«1. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահը հավատարմագրված ՀԳՄ-ների համար անցումային շրջան է սահմանվում մինչև 12 ամիսը:

2. ՀԳՄ-ն վճարում է սույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 5.1)-րդ կետով սահմանված տարեկան վճար մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց 6 ամսվա ընթացքում Լիազորված պետական կառավարման մարմինը հաստատում է սույն օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 5.2)-5.5)-րդ կետերով սահմանված իրավակարգավորումները:

4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց 9 ամսվա ընթացքում Լիազորված պետական կառավարման մարմինը սահմանում է սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետով սահմանված իրավակարգավորումները:

5. Սույն օրենքի 7-րդ հոդվածով սահմանված կարգավորումները գործելու են սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված Լիազորված պետական կառավարման մարմնի հրամանների ուժի մեջ մտնելու պահից:»

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի՝ *նորմատիվ իրավական ակտի կառուցվածքին վերաբերող* 13-րդ հոդվածի համաձայն՝*« (...) 4. Նորմատիվ իրավական ակտն ունենում է անցումային դրույթներ, եթե՝*

1) նորմատիվ իրավական ակտը լրիվ գործողության մեջ դնելու համար պահանջվում են ժամկետներ կամ որոշակի պայմաններ, կամ

2) որոշակի ժամկետների (սահմանափակ ժամանակահատվածի) կամ նորմատիվ իրավական ակտի հիմնական մասով սահմանված պայմանների համար անհրաժեշտ է սահմանել իրավական ակտի հիմնական մասով սահմանված նորմերից տարբերվող այլ նորմեր, կամ

3) նորմատիվ իրավական ակտի հիմնական մասով սահմանված նորմերի ուժի մեջ մտնելուց հետո անհրաժեշտ է սահմանել ըստ որոշակի անձանց շրջանակի կամ տարածքի՝ ակտի հիմնական մասով սահմանված նորմերի գործողության համար այլ նորմեր:

5. Եթե օրենսդրական ակտով (բացառությամբ Սահմանադրության) սահմանված նորմը կարող է կատարվել միայն այդ ակտով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն

պայմանավորված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, ապա օրենսդրական ակտի անցումային դրույթներով սահմանվում են նաև՝

1) օրենսդրական ակտի այն մասերը, որոնք գործելու են ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից.

2) ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման նախատեսվող ժամկետը:(...)»:

Հիմք ընդունելով վերոնշյալ կարգավորումներն՝ անհրաժեշտ ենք համարում նշել, որ Նախագծի 26-րդ հոդվածի 1-ին մասով՝ մինչև օրենքի ուժի մեջ մտնելու պահը հավատարմագրված ՀԳՄ-ների համար անցումային շրջան 12 ամիս նախատեսելուն զուգահեռ անհրաժեշտ է հստակ և որոշակի նախատեսել նաև այդ ժամանակահատվածում որոշակի շրջանակ կազմող համապատասխանության գնահատման մարմինների համար իրավական ակտի հիմնական մասով սահմանված նորմերի գործողության համար այլ նորմեր:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի՝ նորմատիվ իրավական ակտում հղումների կիրառմանը վերաբերող 17-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսվում է, որ *նորմատիվ իրավական ակտերում հղումները կատարվում են հստակ և ուղղակի:*

Նախագծի 26-րդ հոդվածի 2-րդ մասում հղում է կատարվում Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 5.1-ին կետին, մինչդեռ Նախագծի 7-րդ հոդվածում բացակայում է 1-ին մասի 5.1-ին կետը: Նախագծի 26-րդ հոդվածի 3-րդ մասում հղում է կատարվում Նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 5.2-5.5-րդ կետերին, Նախագծի նույն հոդվածի 4-րդ մասում հղում է կատարվում Նախագծի 14-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին, հարկ է նկատել, որ Նախագծի 7-րդ հոդվածում բացակայում են 3-րդ մասը, ինչպես նաև դրա 5.2-5.5-րդ կետերը, Նախագծի 14-րդ հոդվածում բացակայում է 1-ին մասի 3-րդ կետը: Հիմք ընդունելով նշված դիտարկումներն՝ առաջարկում ենք Նախագծի 26-րդ հոդվածով նախատեսված անցումային դրույթների կիրառումն ապահովելու նպատակով հստակեցնել դրանցում կատարված հղումները: Միաժամանակ՝ հարկ է նկատել, որ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմինը չունի լիազորություն հաստատելու Նախագծով նախատեսված իրավակարգավորումները, ուստի անհրաժեշտ է Նախագծի 26-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում հստակ նշում կատարել՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ

իրավական ակտերի ընդունման վերաբերյալ, ինչպես նաև անհրաժեշտ է անցումային դրույթներում հստակ նշում կատարել այն սուբյեկտի մասին, որը օրենսդրական ակտով լիազորվել է ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը: Բացի այդ՝ հարկ է նկատել, որ եթե օրենսդրական ակտով սահմանված նորմերը կարող է կատարվել միայն այդ ակտով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունմամբ, ապա օրենսդրական ակտի անցումային դրույթներով սահմանվում են նաև օրենսդրական ակտի այն բոլոր մասերը, որոնք գործելու են ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ուժի մեջ մտնելու պահից:

25. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագրում դրված չակերտներն առաջարկում ենք հանել:

26. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի լրիվ անվանման հիշատակումն առաջարկում ենք համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջին՝ *«Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս **հետևյալ հաջորդականությամբ** ներառվում են օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, օրենսգրքի վերնագիրը և «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն:»:*

27. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ է շարադրվում Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 188-րդ հոդվածի 9-րդ պարբերությունը: Հարկ է նկատել, որ պարբերություն է հանդիսանում մեկ ամբողջական ավարտուն միտք արտահայտող հատվածը, ուստի՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 188-րդ հոդվածի 9-րդ պարբերությունը վերաբերում է տեխնիկական կանոնակարգերի պահանջներին արտադրանքի և ծառայությունների համապատասխանության պետական վերահսկողություն իրականացնող և Հայաստանի Հանրապետության չափագիտական վերահսկողություն իրականացնող մարմնի ղեկավարի կամ ծառայողի կարգադրագրերով սահմանված

պահանջները սահմանված ժամկետի ընթացքում չպահպանելուն կամ առանց Հայաստանի Հանրապետության չափագիտական վերահսկողություն իրականացնող մարմնի գրավոր համաձայնեցման չափագիտական վերահսկողություն իրականացնող ծառայողի կողմից դրված կապարակնիքը (դրոշմը) վնասելուն կամ հանելուն: Հիմք ընդունելով նշվածը և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծով հետապնդվող նպատակն՝ առաջարկում ենք «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ պարբերությունը՝ դրանում ներառելով նաև վարչական տույժին վերաբերող հատվածը:

Եզրահանգում

Ամփոփելով փորձաքննության արդյունքները՝ կարող ենք նշել, որ Նախագծով սահմանված կարգավորումները կարող են խնդրահարույց լինել Սահմանադրության 6-րդ և 79-րդ հոդվածների տեսանկյունից:

Միաժամանակ, ներկայացված առաջարկությունների հիման վրա, անհրաժեշտ է ապահովել Նախագծերի փաթեթով սահմանված կարգավորումների համապատասխանությունը միմյանց և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքին:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԶԵՄՖԻՐԱ ՀՈՎԱՍԱՓՅԱՆ

Կատարող՝ Մ. Մնացականյան (հեռ.՝ 011-513-248)
03.01.2023թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Նախագծերի փաթեթին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

Նախագծերի փաթեթին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԶԵՄՖԻՐԱ ՀՈՎԱՍԱՓՅԱՆ

Կատարող՝ Մ. Մնացականյան (հեռ.՝ 011-513-248)

03.01.2023թ.

Ֆինանսատնտեսագիտական փորձաքննության արդյունքները

Ներկայացված Փաթեթն (այսուհետ՝ Փաթեթ) ուղղված է համապատասխանության գնահատման մարմինների ԵԱՏՄ ու միջազգային հավատարմագրման համակարգերին ինտեգրմանը, այդ թվում՝ հավատարմագրման արդյունքների փոխճանաչման բազմակողմ, երկկողմ համաձայնագրերի կնքման միջոցով, ինչը կվերացնի առևտրային խոչընդոտները, կապահովի ապրանքների ազատ տեղաշարժը և կնպաստի տնտեսության զարգացմանը: Այդ նպատակով սահմանվում են համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման ժամկետը, վերահավատարմագրման դեպքում հավատարմագրման երկարաձգման ժամկետը, հավատարմագրման կասեցման հիմքերը և ժամկետը, հավատարմագրման դադարեցման հիմքերը:

Փաթեթում ընդգրկված «Հավատարմագրման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 24-րդ հոդվածով առաջարկվում է «Հավատարմագրման մասին» օրենքի 22-րդ հոդվածը լրացնել 1.1 մասով հետևյալ բովանդակությամբ. «Հայաստանի Հանրապետության կառավարությունը երաշխավորում

է, որ ԱՐՄՆԱԲ-ի ընդհանուր ֆինանսավորումը բավարար է իր գործունեությունը պատշաճ կերպով իրականացնելու համար:»: Այս կապակցությամբ հարկ ենք համարում ներկայացնել որոշ նկատառումներ: Նման ձևակերպումը համահունչ չէ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև տվյալ օրենքով սահմանված բյուջետային գործընթացի տրամաբանությանը: Մասնավորապես, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի.

- 9-րդ մասով սահմանվում է, որ պետական լիազորված մարմինն առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ սահմանված ժամկետում հայտատուների հետ համաձայնեցնում է նրանց ներկայացրած հայտերով նախատեսված ծախսերի ֆինանսավորման չափերը,
- 10-րդ մասով սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետության դատական իշխանության մարմինների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքներով ստեղծված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից պատվիրակված որոշակի լիազորությունների հիման վրա առանձին բնագավառներում կարգավորող գործունեություն իրականացնող գործադիր իշխանությունից անկախ մարմինների (սույն մասում այսուհետ՝ հայտատու մարմին) բյուջետային ֆինանսավորման հայտերի պատճենները պետական բյուջեի նախագծի հետ միասին ներկայացվում են Ազգային ժողով: Եթե որևէ հայտատու մարմնի ներկայացրած բյուջետային ֆինանսավորման հայտի շուրջ այդ մարմնի և պետական լիազորված մարմնի միջև ծագած տարաձայնությունները մինչև պետական բյուջեի նախագիծը Ազգային ժողով ներկայացնելը համաձայնեցվել են, ապա պետական բյուջեի նախագծի հետ Ազգային ժողով է ներկայացվում փոխհամաձայնեցված ցուցանիշներ պարունակող, հայտատու մարմնի կազմած բյուջետային ֆինանսավորման հայտի պատճենը:
- 11-րդ մասի համաձայն, բյուջետային ֆինանսավորման հայտերի ներկայացման և դրանց շուրջ՝ պետական լիազորված մարմնի ու հայտատուների միջև տարաձայնությունների համաձայնեցման կարգը սահմանում է կառավարությունը՝ սույն օրենքի պահանջներին համապատասխան:

Այսինքն, համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի տրամաբանության, ՀՀ կառավարությունը բյուջետային ֆինանսավորում ստացող որևէ մարմնի չի երաշխավորում բավարար ֆինանսավորում թեկուզ միայն այն պատճառով, որ ֆինանսավորման բավարարության գնահատման չափանիշներ, որպես այդպիսիք, նախատեսված չեն: Միաժամանակ, նման տեսքով ձևակերպումն առաջացնում է որոշ հարցադրումներ: Մասնավորապես.

- Ինչպես է Կառավարությունը երաշխավորելու, որ ԱՐՄՆԱԲ-ի ընդհանուր ֆինանսավորումը բավարար կլինի իր գործունեությունը պատշաճ կերպով իրականացնելու համար, առավել ևս, եթե հաշվի ենք առնում, որ, բացի պետական բյուջեից կատարվող հատկացումներից, հավատարմագրման ազգային մարմնի ֆինանսավորման աղբյուրներ են.
  - հավատարմագրման ծառայություններից, գնահատումներից և տարեկան վճարներից ստացված միջոցները,
  - հավատարմագրման վերաբերյալ հրատարակություններից ու դասընթացներից ստացված միջոցները,
  - միջազգային ծրագրերին, նախագծերին և համաձայնագրերին մասնակցությունից ստացված միջոցները,
  - օրենքով եւ հավատարմագրման միջազգային ստանդարտներով չարգելված գործունեությունից ստացված այլ միջոցները:
- Ո՞վ և ինչպե՞ս է գնահատելու ԱՐՄՆԱԲ-ի գործունեության պատշաճությունը և դրա իրականացման համար ֆինանսավորման բավարարությունը:

Եզրահանգում

Փաթեթը ֆինանսատնտեսագիտական հիմնախնդիրների տեսանկյունից լրամշակման կարիք ունի՝ վերը նշված դիտողությունը հաշվի առնելու տեսանկյունից:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

կատարող՝ գլխավոր մասնագետ Գ. Կիրակոսյան
(հեռ.՝ 011 513-603)
05.01.2023թ.

Սոցիալական փորձաքննության արդյունքները

1. Նախագծերի փաթեթով առաջարկվում է «Հավատարմագրման մասին» օրենքում և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում» լրացումներ և փոփոխություններ կատարել:

Ըստ Նախագծերի փաթեթին կից ներկայացված հիմնավորման՝ խնդիրը կայանում է նրանում, որ «...*համապատասխանության գնահատման մարմինների (այսուհետ՝ ՀԳՄ) հետագա հավատարմագրման գործընթացը չի տարբերվում առաջին անգամ իրականացվող հավատարմագրման գործընթացից: Տվյալ գործընթացը ներառում է հավատարմագրման հայտի ներկայացում, փաստաթղթերի փորձաքննություն, ՀԳՄ-ի՝ ըստ գործունեության իրականացման վայրի գնահատում, որն էլ առաջացնում է ՀԳՄ-ների դժգոհությունը տվյալ գործընթացի նկատմամբ:»*:

Նախագծերի փաթեթով առաջարկվում է՝

- վերահավատարմագրման գործընթացն առավել դյուրին դարձնել, ինչը, ըստ Նախագծերի փաթեթի հեղինակի, կնպաստի ՀԳՄ-ների ժամանակի, ինչպես նաև ֆինանսական միջոցների կրճատմանը,
- խմբագրել օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները՝ միջազգային պահանջներին համապատասխան,
- սահմանել ՀԳՄ-ների հավատարմագրման ժամկետները, հավատարմագրման լրիվ կամ մասնակի կասեցման հիմքերն ու ժամկետները, հավատարմագրման դադարեցման հիմքերը,
- Կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմնին վերապահել հաստատելու հավատարմագրման վկայագրի, համապատասխանության գնահատման չկանոնակարգվող և կանոնակարգվող ոլորտներում կամավոր

սերտիֆիկացման համապատասխանության սերտիֆիկատների ձևերը, Հավատարմագրման ազգային մարմնի պատկերանիշը, հավատարմագրման նշանը և դրանց կիրառման կարգը,

• կանոնակարգել Հավատարմագրման ազգային մարմնի կողմից խորհրդատվական տեխնիկական կոմիտեների ստեղծումը, որոնք գործելու են հասարակական հիմունքներով՝ հավատարմագրմանն ու համապատասխանության գնահատմանն առնչվող կոնկրետ տեխնիկական չափանիշների, ուղեցույցների, պահանջների մշակման և վերլուծության վերաբերյալ խորհրդատվություն տրամադրելու նպատակով (փոփոխությունը պայմանավորված է միջազգային գործելակարգով և ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17011 ստանդարտի 4.4.5, 4.4.6 և 5.8 կետերի պահանջներով) և այլն:

2. Նախագծերի փաթեթը սոցիալ, կրթական, առողջապահական հիմնախնդիրներ չի պարունակում:

Նախագծերի փաթեթի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:

Եզրահանգում

Նախագծերի փաթեթի ընդունմամբ ակնկալվում է ԵԱՏՄ և միջազգային հավատարմագրման պահանջների ինտեգրում, Հավատարմագրման ազգային մարմնի կողմից իրականացրած աշխատանքների ճանաչում եվրոպական ու միջազգային հավատարմագրման մարմինների կողմից՝ երկկողմ և բազմակողմ ճանաչման համաձայնագրեր կնքելու միջոցով:

Նախագծերի փաթեթը սոցիալ, կրթական, առողջապահական հիմնահարցերի տեսանկյունից լրամշակման կարիք չունի:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ, ԿՐԹԱԿԱՆ,
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Լ. ՄԱՐԿՈՍՅԱՆ

Կատարող՝ Ս. Համբարձումյան (հեռ. 011-513-360)
22.12.2022թ.